ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 26 փետրվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Գյուլումյանի
Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-Ի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ն դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի փետրվարի 18-ին)՝ խնդրելով. որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի՝ ՀՀ

Սահմանադրության 28-րդ, 29-րդ հոդվածներին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերին, 78-րդ հոդվածին համապատասխանության հարցը:

2. Դիմողը պնդում է, որ դատարանների կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի կիրառման արդյունքում մերժվել է ապրանքային նշանի գրանցման վիճարկման գործով հայցի ապահովման միջոց կիրառելու իր միջնորդությունը՝ պայմանավորելով մերժումը հայցի ապահովման միջոցը բացառապես պարտավորեցման, գործողության կատարման և ճանաչման հայցերի դեպքում կիրառելու օրենսդրական հնարավորությամբ:

Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում վիճարկման հայցի ներկայացման դեպքում հայցի ապահովման միջոց կիրառելու իրավական հնարավորություն, հակասում է Սահմանադրությանը: Բացի դրանից, դիմողի կարծիքով՝ նշված **օրենսդրական բացը** չի կարող լրացվել նաև իրավակիրառ պրակտիկայում՝ հանգեցնելով Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների խախտմանը: Մասնավորապես, դիմողը նշում է, որ **զրկվել է** երրորդ անձի անունով գրանցված ֆիրմային անվանումը, ինչպես նաև նույնատիպ ապրանքների և ծառայությունների բնագավառներում շփոթության աստիճանի նման (մասնակիորեն նույնական) **ապրանքային նշանների օգտագործումը** գործի քննության ժամանակահատվածում **արգելելու հնարավորությունից**:

Դիմողը պնդում է, որ իր դեպքում վիճարկման առարկա է երրորդ անձի անվամբ ապրանքային նշանների գրանցումը (այլ կերպ՝ սեփականության իրավունքը), որի պարագայում ակնհայտորեն չի կարող կիրառվել ապրանքային նշանի գրանցման վարչական ակտի կատարման կասեցումը՝ որպես հայցվորի իրավունքների միջանկյալ իրավական պաշտպանության միջոց:

Դիմողը գտնում է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, ելնելով ընտրված դատավարական ընթացակարգից, տարբերակված մոտեցում է դրսևորում միևնույն իրավունքի գրանցումը վիճարկելու երկու դեպքերում, ինչը հանգեցնում է

օբյեկտիվ հանգամանքերով չարդարացված խտրական մոտեցման նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ: Այսպես, եթե անձի կողմից ներկայացվում է սեփականության կամ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի գրանցումը վիճարկելու պահանջ՝ վիճարկման հայցի շրջանակում, վերջինս զրկվում է համապատասխան գույքի կամ մտավոր սեփականության օբյեկտի օգտագործումը և/կամ տնօրինումը երրորդ անձին արգելելու հնարավորությունից (հայցի ապահովման միջոցով), մինչդեռ, եթե նույն իրավունքի գրանցումը վիճարկվում է ճանաչման հայց ներկայացնելու միջոցով (գրանցումը առ ոչինչ ճանաչելու հայցով), ապա դատարանն իրավասու է կիրառել հայցի ապահովման միջոց: Օրենսդրի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի տեսանկյունից ողջամիտ չի կարող համարվել հայցի ապահովման թույլատրելիությունը նույն՝ վիճարկման հայցի առարկա հանդիսացող ակտի (տվյալ դեպքում՝ իրավունքի գրանցման ակտի) առ ոչինչ ճանաչելու եղանակով վիճարկելու դեպքում:

Դիմողի համոզմամբ վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը հիմնավորվում է նաև նրանով, որ նույն իրավունքի պաշտպանությունը քաղաքացիական դատավարության կարգով իրականացնելիս անձն օգտվում է հայցի ապահովման միջոցի իրավունքից, մինչդեռ, այն վարչական կարգով իրականացնելիս զրկվում է դրանից, որպիսի տարբերակված մոտեցումը զուրկ է օբյեկտիվ հիմքերից և իրավաչափ նպատակից և հանգեցնում է նաև խտրականության արգելման սկզբունքի խախտման:

3. Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ առկա չեն սույն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,

• դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում չի իրականացվում գործի դատաքննություն,

• դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և պահպանել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածով և 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

26 փետրվարի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-11